

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-1-5-Ա

ք. Երևան

10.01.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հունվարի 10-ի նիստում քննարկեց 2021 թվականի դեկտեմբերի 10-ին «Մարինկա» ՍՊԸ ընկերության (Երևան, Շենգավիթ թղմ, Չեխովի փող. 56, բն. 51, AM) կողմից ներկայացված բողոքը «hometv» (No20192346) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում «TV» գրառումը ներառող ապրանքային նշանը չի կարող գրանցվել հայտում նշված 35-րդ դասի «ռադիոգովազդ», 38-րդ դասի «ռադիոհեռարձակում. ռադիոկապ. ինտերնետին հեռահաղորդակցական միացման ապահովում. ինտերնետ մուտքի ապահովում. համացանցի հասանելիության ժամանակի վարձույթ. ինտերնետին հեռահաղորդակցական միացման ապահովում. ինտերնետ մուտքի ապահովում. ինտերնետում բանավեճային համաժողովների հասանելիության ապահովում», 41-րդ «ռադիո ընդունիչների վարձույթ. ռադիո ծրագրերի մոնտաժում. տոմսերի բաշխման ծառայություններ (զվարճանք, ժամանց). լուսանկարչական ռեպրոտաժներ. համակարգչային ցանցերի կողմից առցանց տրամադրվող խաղային ծառայություններ. զվարճալի ռադիոհաղորդումներ. ռադիո և ծրագրերի մոնտաժում», 42-րդ, 45-րդ դասերի ծառայությունների համար, քանի որ սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ծառայությունների բնույթի և տեսակի վերաբերյալ հարցերում: «TV» գրառումը, որը հանդիսանում է «television» (հեռուստատեսություն) բառի հապավումը, սպառողին հաղորդում է կոնկրետ տեղեկատվություն մատուցվող ծառայության

վերաբերյալ, ուստի հայտարկված նիշը տեսնելիս միջին սպառողի մոտ կարող է տպավորություն ստեղծվել, թե այդ ապրանքային նշանի ներքո մատուցվում են միայն հեռուստահեռարձակման ոլորտին վերաբերող ծառայություններ: Ինչ վերաբերում է ապրանքային նշանի մասնակի գրանցման մասին որոշմանն ի պատասխան Ձեր կողմից ներկայացված կրկնական փորձաքննություն անցկացնելու մասին դիմումի մեջ առկա այն փաստարկներին, որ «Մտավոր սեփականության գործակալությունը վերացարկվել է այն հանգամանքից, որ տարիներ շարունակ տվյալ ապրանքային նշանի ներքո «Մարինկա» ՍՊԸ-ն իրականացրել է թե՛ ինտերնետին, թե՛ ռադիոյին առնչվող գործառնություններ և որևէ անգամ միջին սպառողի կողմից մոլորության կամ շփոթմունքի մեջ հայտնվելու դեպք չի գրանցվել» և «Գործակալությունը վերացարկվել է այն հանգամանքից, որ TV-ն ինքնուրույն պաշտպանության տարր չէ, ուստի դրա ներքո կատարվող գործառնությունների առնչությամբ չի կարող որևէ սահմանափակում լինել», ապա տեղեկացնում ենք, որ գրության մեջ նշված գործունեությունն իրականացվել է «ՄԱՐԻՆԿԱ» ՍՊ ընկերության կողմից, իսկ ապրանքային նշանի հայտը ներկայացվել է «hometv» ապրանքային նշանի գրանցման համար: Ինչ վերաբերում է «tv» չհապապանվող տարրին, ապա ակնախ այն հանգամանքից, որ ապրանքային նշաններում առկա նկարագրական բնույթի տարրերը հանդիսանում են չպահպանվող տարրեր, նրանք ծառայում են սպարողներին կոնկրետ ապրանքի կամ ծառայության տեսակի և բնույթի վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու համար, որն էլ հանդիսանում է ապրանքների կամ ծառայությունների սահմանափակման հիմք:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ:

Բողոքարկման խորհրդի անդամը առաջարկ ներկայացրեց բողոքը մասնակի բավարարելու, փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակելու վերաբերյալ, քանի որ փորձաքննության ընթացքում հայտնաբերվել էր հակադրվող գրանցված ապրանքային նշան նույնատիպ ծառայությունների համար, որի մասին մերժման հիմքում ոչինչ չէր նշվել և նաև վերանայել հայտում նշված որոշ ծառայություններ, որոնց համար միգուցե հնարավոր լինի գրանցել հայտարկված ապրանքային նշանը:

Փորձաքննության բաժնի պետը ընդունեց առաջարկը և համաձայնվեց, որ որոշման մեջ պետք է ավելացվի նաև այդ հիմքը:

Բողոքարկողի ներկայացուցիչը նույնպես չառարկեց:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության

աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մարինկա» ՍՊԸ ընկերության կողմից ներկայացված բողոքը մասնակի բավարարել, փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչել և «hometv» (No20192346) ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ